Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 01.03.2022թվականի <<2022 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 36-Ն որոշմանը կից թիվ 1, 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին>> որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2022 թվականի համայնքի բյուջեի վարչական մասում փոփոխությունը պայմանավորված է համայնքի վերակազմակերպումից հետո առաջացած մի շարք խնդիրների կարգավորման հետ կապված 2022 թվականի բյուջեում նախատեսված միջոցները ավելացնելու և առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

Մասիս համայնքի վերակազմակերպման ընթացքում գյուղական համայնքների կողմից կատարված մի շարք բյուջետային ծախսերի ամփոփումից հետո պարզվում է, որ բյուջեում նախատեսված մի շարք ծրագրերում որոշակի հոդվածներով նախատեսված միջոցները չեն բավարարում մինչև տարեվերջ իրականացնել անհրաժեշտ ծախսերը, մասնավորապես՝ աշխատավարձի հոդվածով ծախսերը չեն բավականացնում 55 000 000 դրամի չափով, որը հետևանք է հիմնականում վճարված արձակման նպաստների և վերջնահաշվարկների:

Օրենսդիր և գործադիր մարմիններ դասակարգման հոդվածներով անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ՝

Աշխատավարձի հոդվածով - 55 000 000 դրամ

Էլեկտրաէներգիայի ծախսեր - 24 000 000 դրամ

Ջեռուցման ծախսեր - 5 000 000 դրամ

Ջրամատակարարում և ջրահեռացում – 4 500 000 դրամ

Կապի ծառայություններ - 580 000 դրամ

Համակարգչային ծառայություններ – 150 000 դրամ

Գրասենյակային նյութեր /ID կարդացող սարքի համար/ -30 000 դրամ

Ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ նորոգման համար – 5 000 000 դրամ

Վարչական ղեկավարների կողմից ներկայացված մի շարք խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ավելացնել քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմում 20 օպերատորների հաստիքներ՝ ամսական 150 000 դրամ դրույքաչափով , ինչպես նաև Այնթապ, Ջրահովիտ, Ռանչպար, Նոր-Խարբերդ, Նոր Կյուրին, Նիզամի վարչական նստավայրերի սպասարկման համար անհրաժեշտ է նախատեսել 4 պահակի, 3 բանվորի և 1 հավաքարարի, քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմում Սիս, Զորակ և Դաշտավան գյուղերում հանդիսությունների սրահների սպասարկումն ապահովելու նպատակով՝ 3 դրույք հանդիսությունների սրահի պատասխանատուի հաստիքներ ՝ ամսական 100 000 դրամ դրույքաչափերով:

Այնթապ, Նոր Խարբերդ և Նոր Կյուրին համայնքներում դպրոցները և մանկապարտեզները ելնելով գյուղերի առանձնահատկություններից գտնվում են բնակելի թաղամասերից բավականին հեռավորության վրա: Դպրոցներ և մանկապարտեզներ երեխաների հաճախումներին օժանդակելու համար առաջարկվում է ընդունել 2022 թվականի մայիս- հունիս և սեպտեմբեր- դեկտեմբեր ամիսներին պայմանագրային 3 վարորդներ Այնթապ գյուղի համար՝ 140000 դրամ, Նոր Խարբերդ գյուղի համար՝ 95000 դրամ և Նոր Կյուրին գյուղի համար՝ 95000 դրամ աշխատավարձով:

Նոր ստեղծված հաստիքների պահպանման համար օրենսդիր և գործադիր մարմիններ գործառական դասակարգման աշխատավարձի հոդվածը անհրաժեշտ է ավելացնել 34 780 000 դրամի չափով:

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ դասակարգման ոլորտին անհրաժեշտ է լրացուցիչ հատկացնել 490 000 դրամ, որից <<Միջհամայնքային միավորմանը>>՝ 190 000 դրամ՝ Զորակ, Սիփանիկ և Գետափնյա գյուղերի պարտքի մարման համար և <<Վեկտոր Պլյուս>> գույքահարկի ծրագրի սպասարկման համար 300 000 դրամ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններում անհրաժեշտ է ներառել հետևյալ ծախսերը՝

Մարմարաշենի <<Մարմարիկ>> մանկապարտեզի սեյսմիկ հետազոտության համար՝ 350 000 դրամ

Այնթապ բնակավայրի 15 փողոցում գտնվող խորքային հորի պոմպի ընթացիկ նորոգման համար՝ 1,0 մլն դրամ:

Գյուղատնտեսության ոլորտին անհրաժեշտ է լրացուցիչ 1,0 մլն դրամ անասնաբույժերի աշխատավարձի համար և 9,0 մլն դրամ էներգետիկ ծախսերին՝ արտեզյան հորերի պոմպերի էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց վճարման համար:

Ոռոգման ոլորտում անհրաժեշտ է Մասիս Համայնքի արտեզյան հորերի պոմպակայանների ընթացիկ նորոգման համար՝ 1,0մլն դրամ,

Դարակերտ, Այնթապ, Խաչփար համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական քարտեզագրման համար՝ 300,0 հազար դրամ:

Հանգստի և սպորտի ծառայությունների ոլորտում անհրաժեշտ է այգիների և խաղահրապարակների նստարանների ընթացիկ նորոգման համար 1,0մլն դրամ,

Այնթապ Համայնքի ֆուտբոլային թիմին 20 հատ համազգեստի համար 100,0հազար դրամ,

<<Կարատե դո և քիքբոքսինգ ազգային ֆեդերացիային>> նվիրատվություն 500,0 հազար դրամ,

<<Ազգային Լեգեոն>> ուսումնամարզական ակումբին նվիրատվություն՝ 500,0 հազար դրամ:

Գրադարանների ոլորտին նախատեսված սուբսիդիան անհրաժեշտ է ավելացնել 2140,0 հազար դրամի չափով, որը 2022 թ. հունվար- փետրվար ամիսների բյուջեում չներառված փաստացի ծախսերն են:

Դարբնիկ, Մարմարաշեն և Ղուկասավան վարչական շրջաններում անհրաժեշտություն է առաջացել վերաբացելու գրադարանները, իսկ գրքային ֆոնդի ավելացմանը զուգահեռ, կենտրոնական գրադարանում աշխատանքների կանոնակարգման համար անհրաժեշտ է լրացուցիչ ևս երկու գրադարանավարի հաստիք: Ընդհանուր 5 գրադարանավարների հաստիքների պահպանման համար անհրաժեշտ է լրացուցիչ սուբսիդիա <<Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան>> ՀՈԱԿ-ին 4 400,0հազար դրամի չափով:

Նախադպրոցական կրթության ոլորտում անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ <<Մասիս Համայնքի Թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին գույքի նվիրաբերման պայմանագրի 10%-ի չափով, որպես մասնակցության վճար՝ 1918,0հազար դրամ,

<<Մասիս Համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը 2022 թվականի հունիսի 1-ից 8 խմբով վերաբացվելու համար անհրաժեշտ է լրացուցիչ սուբսիդիա 21,0 մլն դրամի չափով,

Մարմարաշենի <<Մարմարիկ>> մանկապարտեզում 0.5 դրույք ֆիզկուլտուրայի հրահանգիչի հաստիք նախատեսելու համար անհրաժեշտ է լրացուցիչ սուբսիդիա 440.0 հազար դրամ

Մասիս Համայնքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում 0,5 դրույք ֆիզկուլտուրայի հրահանգիչի հաստիքի պակասեցման հետևանքով անհրաժեշտ է պակասեցնել հատկացվող սուբսիդիան 660,0հազար դրամով:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտում <<Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ին հատկացվող սուբսիդիան անհրաժեշտ է ավելացնել 800,0 հազար դրամով՝ հնչյունային տեխնիկայի սպասարկողի նախատեսվող հաստիքի համար,

<<Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> ՀՈԱԿ-ում նախատեսված 1 դրույք մշակութային և մասսայական միջոցառումների կազմակերպիչի և 0.5 դրույք խոհարարի խմբակի դասատուի համար անհրաժեշտ է հատկացնել լրացուցիչ սուբսիդիա 680,0 հազար դրամ,

<<Արմեն Նազարյանի անվան մարզադպրոց>> ՀՈԱԿ-ում նախատեսվող 3 դրույք ֆուտբոլի մարզիչի, 1 դրույք ձյուդոյի և 3 դրույք ազատ ոճի ըմբշամարտի մարզիչների հաստիքների համար անհրաժեշտ է լրացուցիչ սուբսիդիա 3 080,0 հազար դրամ:

Վերոնշյալ ծախսերը բյուջեում ներառելու համար առաջարկվում է 2022 թվականի վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել՝

Հարկային եկամուտները՝

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկի մասով 60.0 մլն դրամով, որից իրավաբանական անձանցից՝ 13.0 մլն դրամ, ֆիզիկական անձանցից՝ 47.0 մլն դրամ,

Համայնքների վարչական տարածքում գտնվող հողի հարկի մասով 40.0 մլն դրամ, որից գյուղ նշանակության հողի հարկի մասով՝ 5.0 մլն դրամ, ոչ գյուղ նշանակության հողի հարկի մասով՝ 35.0 մլն դրամ,

Ոչ գյուղ նշանակության հողերի վարձակալությունից եկամուտները ավելացնել 5.0մլն դրամ,

Գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 56.0մլն դրամ

Տեղական տուրքերը ավելացնել 2.0 մլն դրամով, որից՝

ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ 100.0 հազ դրամ,

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝ 500.0հազ դրամ,

հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար՝ 800.0հազ դրամ,

Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ՝ 200.0հազ դրամ,

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար ՝ 200.0 հազ դրամ,

Համայնքի վարչական տարածքում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ 200.0հազ դրամ,

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներն ավելացնել 7.0 մլն դրամ,

Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներն ավելացնել 2.0մլն դրամով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածը նվազեցնել 6078,0 հազար դրամով:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական մասում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Ծախսեր / հազար դրամ/*	*Եկամուտներ /հազար դրամ/*
1				*հարկային եկամուտներ /հողի հարկ, գույքահարկ/*			*156000,0*
2				*ոչ գյուղ նշանակության հողի վարձ*			*5000,0*
3				*տեղական տուրքեր*			*2000,0*

4				***վարչական իրավախախտումների համար տուգանքներ***			***2000,0***
5				***ինքնակամ շինությունների օրինականացում***			***7000,0***
6	*01*	*1*	*1*	***Օրենսդիր և գործադիր մարմիններ.*** Աշխատավարձի հոդվածն ավելացնել	4111	89 780,00	
7				Ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ նորոգում	4252	5 000,00	
8				Էներգետիկ ծառայություններ /էլ.էներգիա/	4212	24 000,00	
9				Էներգետիկ ծառայություններ /ջեռուցման գազ/	4212	5 000,00	
10				Ջրամատակարարում և ջրահեռացում	4213	4 500,00	
11				Կապի ծառայություններ	4214	580,00	
12				համակարգչային ծառայություններ /ՏՀԶՎԿ/	4232	150,00	
13				էլեկտրոնային ստորագրման սարքի ձեռք բերում	4261	30,00	
14	*01*	*3*	*3*	**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ**. Գույքահարկի ծրագրի սպասարկման համար	4232	490,00	
15	*01*	*6*	*1*	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների** ''ընդհանուր բնույթի այլ ծառայություններ'' հոդվածը նվազեցնել	4239	***-6 078,00***	
16				Մարմարաշենի ''Մարմարիկ'' մանկապարտեզի սեյսմիկ հետազոտություն	4241	350,00	
17				Այնթապ բնակավայրի 15 փողոցում գտնվող խորքային հորի պոմպի ընթացիկ նորոգում	4252	1 000,00	
18	*04*	*2*	*1*	**Գյուղատնտեսություն.** Անասնաբույժերի աշխատավարձի ֆոնդը ավելացնել	4111	1 000,00	
19				էլեկտրաէներգիա /արտեզյան հորերի պոմպերի շահագործման համար/	4212	9 000,00	
20	*04*	*2*	*4*	**Ոռոգում**. Մասիս համայնքի արտեզյան հորերի պոմպակայանների ընթացիկ նորոգում	4252	1 000,00	

21				Դարակերտ, Այնթապ, Խաչփար համայնքներում գյուղ. Նշանակության հողերի քարտեզագրման աշխատանքների համար	4241	300,00	
22	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Այգիների և խաղահրապարակների նստարանների ընթացիկ նորոգում	4251	1 000,00	
23				Այնթապ համայնքի ֆուտբոլային թիմի 20 հատ համազգեստի համար	4269	100,00	
24				,,Կարատե դո և քիքբոքսինգ'' ազգային ֆեդերացիային դրամական նվիրատվություն	4819	500,00	
25				Ազգային Լեգեոն ուսումնամարզական ակումբին նվիրատվություն	4819	500,00	
26	08	2	1	Գրադարաններ. Սուբսիդիա /գրադարանավարների 5 հաստիքների ավելացման համար և 2140,0 հազ. Պակաս նախատեսված սուբսիդիա/	4511	6 540,00	
27	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Մասիս համայնքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին գույքի նվիրաբերման 10 %- ի մասնակցության համար հատկացնել լրացուցիչ սուբսիդիա	4511	1 918,00	
28				Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին 8 խմբի համար լրացուցիչ սուբսիդիա	4511	21 000,00	
29				Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սուբսիդիայի նվազեցում /ֆիզկուլտ հրահանգիչի 0,5 դրույքի պակասեցում/	4511	-660,00	
30				Մարմարաշենի ''Մարմարիկ'' մանկապարտեզին լրացուցիչ սուբսիդիա /0,5 դրույք ֆիզկուլտ հրահանգիչի ավելացում/	4511	440,00	
31	09	5	1	**Արտադպրոցական դաստիարակություն**. <<Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց>>-ին լրացուցիչ սուբսիդիա/ հնչյունային տեխնիկայի սպասարկողի հաստիքի համար/	4511	800,00	
32				<<Մանկապատանեկան ստեղծագործական>> կենտրոն ՀՈԱԿ-ին /1կազմակերպիչ, 0,5 խոհարար/	4511	680,00	

33				<<Արմեն Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ /7 դրույք մարզիչի ավելացում/	4511	3 080,00	
				Ընդամենը		***172 000,00***	***172 000,00***

2022 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտների և ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի եկամուտները և ծախսերը կավելանան 172 ,0 մլն դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ